

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍՏԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԴԵԿԱԿԱՐԻ 2017_ԹՎԱԿԱՆԻ
II ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

-Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով 155 անգամ հանդես եմ եկել տարբեր միջնորդություններով կադաստրի տարածքային ստորաբաժանումում, նոտարական գրասենյակում, ոստիկանության բաժանումներում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում և այլ կազմակերպություններում:

-Կատարել եմ համայնքի բնակիչ հանդիսացող 85 անձանց ընդունելություն, քննարկել բոլոր դիմումները, բողոքները, առաջարկությունները, որոնցից 70-ին տրվել է դրական լուծում:

-Աշխատակազմի միջոցով կատարել ենք համայնքի 3 ընտանիքների ընտանեկան նպաստի համակարգում փաստագրման աշխատանքները, ինչպես նաև ազգաբնակչության ամենամյա սեռա-տարիքային հաշվառման աշխատանքները:

-Հրավիրել եմ «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 1 նիստ, քննարկել եմ համայնքի անապահով և ծնողազուրկ երեխաների իրավունքների պաշտպանության, դաստիարակության, ուսման հետ կապված հարցեր, տրամադրվել է դրամական օգնություն:

-Փաստաթղթերի պատճեններ, քաղվածքներ, տեղեկանքներ եմ տրամադրել համայնքի 205 բնակիչների: Օժանդակել եմ գյուղացիական տնտեսություններին բանկերից ֆինանսական կազմակերպություններից գյուղատնտեսական վարկեր ստանալու նպատակով: Արձակել եմ 3 կարգադրություն, ընդունել 27 որոշում, հրավիրել և վարել եմ համայնքի ավագանու 5 նիստ:

Ֆինանսների բնագավառում

Ապահովել եմ բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրումը, տնօրինել բյուջեի միջոցները՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը, ստորագրել բոլոր ֆինանսական փաստաթղթերը:

-Կազմակերպել և աշխատակազմի միջոցով իրականացրել եմ II կիսամյակի կտրվածքով նախատեսված.

շենքերի գույքահարկի գանձումը 122,2հազ. դրամ, 99,7 %

հողի հարկի գանձումը 5040,0հազ. դրամ 68 %

վարձակալական հողի վարձը ----- դրամ,

խմելաջրի վարձավճարը 865,0 հազ. դրամ 42 %

մեքենաների գույքահարկ 400,0հազ. դրամ 18 %

տեղական տուրքեր և վճարներ 80,0հազ. դրամ 100 %

Աշխատակազմի միջոցով կազմել և ավագանու նիստի հաստատմանն եմ ներկայացրել Երասխահունի համայնքի 2017 թվականի բյուջեի մեջ կատարվելիք անհրաժեշտ փոփոխությունները :

Պաշտպանության բնագավառում

- Աջակցել եմ աշնանային զորակոչին, զինկոմիսարիատից ստացված 15 ծանուցագրերը հանձնվել է զորակոչիկներին, ապահովել նրանց ներկայանալը զինկոմիսարիատ, որոնցից 7 մեկնել եմ ժամկետային ծառայության: Աշխատանքներ եմ տարվել

հետախուզման մեջ գտնվող 6 գորակոչիկների գտնվելու վայրը հայտնաբերելու ուղղությամբ, որպիսզի ոչ ոք չխուսափի զինվորական ծառայությունից:

Համապատասխան որոշումներով ստեղծվել է համայնքի արտակարգ իրավիճակներում ազգաբնակչության տարահանման հանձնաժողով և հաստատվել է համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:

-Կազմակերպել և անցկացրել ենք համայնքի ազգաբնակչության 2 սեմինար դասընթաց և 1 գործնական վարժանք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի արտակարգ իրավիճակներում բնակչության տեղահանման սխեմայի սահմաններում: Համապատասխան կարգադրություններով և որոշումներով վերանայել և համալրվել են նախատեսված ջոկատների և օղակների կազմերը, անցկացվել է անհրաժեշտ տրանսպորտային և այլ նյութական պարագաների տեխզնման և ստուգման աշխատանքները:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Ապահովել են համայնքի հողատարածքների օգտագործումը և շահագործումը ըստ դրանց նպատակային և գործառնական նշանակության, ձեռնարկել մշակվող հողերի բերրի շերտի պահպանման, աղակալումից, էռոզիայից զերծ պահելու համար: Կրճատվել են չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի քանակը շուրջ 5%-ով, չմշակվող գյուղատնտեսական հողատարածքներ գրեթե չկան: Ամենօրյա աջակցություն են ցուցաբերել համայնքում իրականացված շինարարական աշխատանքներին՝ մասնավորապես համայնքային ենթակայության ավտոճանապարհի, համայնքի ռոտգման ներտնտեսային ցանցի ջրատարների կառուցապատման, հիմնանորոգման, մասնակի վերանորոգման աշխատանքներին: Ավագապատվել և կոպիճապատվել են համայնքի փողոցների զգալի մասը համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Կոմունալ տնտեսության և բարեկեցության բնագավառում

-Համայնքի միջոցների հաշվին ամիսը 4 անգամ կատարվել է համայնքի տարածքի աղբահեռացման աշխատանքները, հնարավորինս բարեկարգվել են բավականին թվով փողոցներ, մի քանիսը ավագապատվել են՝ համայնքի միջոցների հաշվին:

-Կատարել ենք համայնքի խմելաջրի խողովակաշարի առանձին հատվածների վերանորոգման աշխատանքները, ամենօրյա վերահսկողություն է իրականացվել խմելաջրի նպատակային օգտագործմանը և խնայողությանը, ազգաբնակչությանը ապահովել ենք շուրջօրյա խմելաջրով:

-Վարձել են գյուղի գերեզմանատան պահակ, որը միաժամանակ իրականացնում է մաքրման և բարեկարգման աշխատանքները, լուծված է խմելաջրի և լուսավորման հարցը: Աջակցություն են ցուցաբերել համայնքում գազաֆիկացման աշխատանքները կատարելիս, այս կիսամյակում գազաֆիկացվել է ևս 5 առանձնատուն: Համայնքի բյուջեի միջոցների հաշվին անցկացվել է համայնքի ևս 1 փողոցի գիշերային լուսավորություն 500 մետր երկարությամբ:

Տրանսպորտի և կապի բնագավառում

Ապահովել են «Վիվա Սել-USU» ընկերության շարժական գրասենյակի պարբերաբար այցելումը համայնք, որը տեղում տարաբնույթ ծառայություններ է մատուցում բաժանորդներին, հեռախոսահամարների փաթեթային համակարգում ընդգրկել ենք ևս 10 բնակիչների, որի սակագինը 8 անգամ էժան է սովորականից:

-Օժանդակել ենք համայնքում առկա տրակտորների և այլ գյուղատեխնիկայի վերանորոգման աշխատանքներին, որպեսզի աշնանային գյուղատնտեսական աշխատանքները իրականացվեն ժամանակին: Տեղադրվել են համայնքային ենթակայության ավտոմոբիլային ճանապարհի սահմանանիշերը, ուղեցույցները, երթևեկության կանոնների նշանները: Համայնքի միջոցների հաշվին վերականգնվել են վնասված և շարքից դուրս եկած կահավորանքները:

Առևտրի և սպասարկման բնագավառում

Կատարել ենք առևտրի, կենցաղային սպասարկման օբյեկտների ստուգման աշխատանքները, ստուգվել է առևտրի 3 օբյեկտ կազմել տեղեկանքները և արձանագրությունները որոնցից մեկական օրինակ տրվել են համապատասխան կազմակերպություններին և անհատ ձեռներեցներին: Կազմել ենք կիսամյակային հաշվետվությունները և ներկայացրել Արմավիրի մարզպետարան:

-Տրվել է ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի 2 թույլտվություն, իրականացրել ենք համայնքում գործող առևտրի կետերի ստուգման աշխատանքները, կազմել համապատասխան արձանագրություններն ու տեղեկանքները:

Հասարակական կարգի պահպանության բնագավառում

-Մշտական օժանդակություն ենք ցուցաբերել համայնքի տարածքը սպասարկող ոստիկանության աշխատակիցներին հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու, կանխելու նպատակով:

-Ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ մշակել և իրականացրել ենք միջոցառումներ հատկապես երիտասարդների մոտ գողության, խուլիգանության, թմրամոլության և այլ տեսակի իրավախախտումների կանխարգելման նպատակով:

Պարբերաբար ոստիկանության աշխատակիցներից տեղեկություններ ենք ստացել համայնքում կատարվող իրավախախտումների վերաբերյալ, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ: Աշխատանքներ են տարվել անասնագույնները հուսալի փականներով ապահովելու համար՝ համայնքում անասնագողության դեպքերը բացառելու համար: Համայնքում առկա 2 հանրակացարանային մասնաշենքերի մուտքերի փայտաշեն դռները փոխարինվել են մետաղյա դռներով, շքամուտքերը և շրջակա տարածքը ապահովվել է գիշերային լուսավորությամբ, գողության դեպքերը բացառելու նպատակով:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

-Համայնքի երիտասարդների համար 2 անգամ կազմակերպել ենք համերգ- միջոցառում, տրամադրել համերգի տոմսերը:

Համայնքի միջոցների հաշվին ստեղծել ենք հայկական ժողովրդական և ազգագրական պարի խմբակ, որտեղ սովորում են համայնքի շուրջ 25 երեխաներ:

Աջակցել ենք միջնակարգ դպրոցի բնականոն գործունեությանը, դպրոց հաճախելուց խուսափող երեխաների և նրանց ծնողների հետ տարել բացատրական աշխատանքներ, հետևել ուսման որակի և կրթամակարդակի բարձրացմանը: Ամեն կերպ օժանդակել ենք միջնակարգ դպրոցի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներին, հիմնովին փոխվել են տանիքը, պատուհանները, դռները, կատարվել են ներքին և արտաքին հարդրման

աշխատանքները ինչը իր հերթին նպաստում է ուսման և կրթամակարդակի բարձրացմանը : Դպրոցի աշակերտներին համայնքի բյուջեից տրամադրել են ամանորի կապակցությամբ համերգի տոմսեր և նվերներ : Կազմակերպվել են հանրային բաց լսումներ և քննարկումներ, <<Համայնքների զարգացման հիմնադրամի>> միջոցով և համայնքի մասնաբաժնի ներդրմամբ միջնակարգ դպրոցի շենքը ջեռուցելու, հիմնանորոգելու, ամրացնելու նպատակով, գործընթացը գտնվում է սկզբնական փուլում: Նախադպրոցական կրթության ծրագրի շրջանակում համայնքի բյուջեի միջոցների հաշվին գործում է նախակրթարանի 1 խումբ , որտեղ սովորում են 20 երեխաներ :

Առողջապահության, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում

-Օժանդակել են համայնքի բուժկետի բնականոն գործունեությանը, լուծել էլեկտրաէներգիայի և ջեռուցման խնդիրները, բնակիչները ստանում են որակյալ մատչելի բուժօգնություն: Կազմակերպել արևելյան մարտարվեստի պարապմունքներ շուրջ 20 պատանիների համար, որոնցից շատերը մարզային, հանրապետական մրցաշարերում գրավել են մրցանակային տեղեր և իմ կողմից արժանացել դրամական խրախուսանքի:

Գյուղատնտեսության բնագավառում

-Աշխատակազմի միջոցով աջակցել են համայնքի բոլոր հողօգտագործող տնտեսություններին շուրջ 170 հա. ցանքատարածությունների վրա աշնանային գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստվելիս, մասնավորապես սերմացուների մատակարարման գործում, գյուղտեխնիկայով ապահովելու հարցում, կատարվել է որակյալ աշնանացանք: Կատարել ենք համայնքում առկա բոլոր տեսակի անասունների և թռչունների, պրոֆիլակտիկ բուժման և վակցինացման աշխատանքները: Հողագործությամբ զբաղվող մենատնտեսների համար կազմակերպել են դասընթացներ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ «Հայաստան » գրասենյակի կողմից ֆինանսավորվող «Ջրից դեպի շուկա» ծրագրի շրջանակներում, ևս 12 մենատնտես ստացել են որակյալ ուսուցում և վկայական: Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի օժանդակությամբ անցկացրել ենք երկարաժամկետ գյուղատնտեսական վարկավորման դասընթացներ համայնքի հողօգտագործողների հետ , թվով 30 բնակիչներ ստացել են որակավորման սերտեֆիկատներ :

Համայնքում ոռոգման ջրի սակավության պատճառով չէր ոռոգվում շուրջ 15 հա. գյուղատնտեսական նշանակության հողատարածք: Այդ նպատակով միջնորդությամբ հանդես ենք եկել <Ջրային տնտեսության պետական կոմիտեի ԾԻԳ գրասենյակում> համայնքում թվով 1 հատ խորքային հորի հորատման համար, ներկայումս աշխատանքները ավարտվել են և հողօգտագործողները հնարավորություն ունեն կատարել զարնանացանը վերոհիշյալ հողատարածքների վրա: Բացի այդ հորատվող հորերի սպասարկման համար կառուցվելու է 2 կմ. -ից ավելի բետոնե կիսախողովակներով ջրատար, որպեսզի բացառվի ոռոգման ջրի կորուստը:

19.01.2018թ.

Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի

ղեկավար՝

Արմեն Ավետիսյան

